


ԴՐՈՒԱԳ Գ

Ա. Դաւաճանութիւն Բրնձին Անտիոքայ

Մահ Սալահէտտինի ոչ այնքան առիթ ապահովութեան ընծայեաց Լեւոնի, որքան խէթ կասկածանաց Բրնձին Անտիոքայ, որ յուսայրն անուամբ եւ զինուք մեծի սուլտանին՝ թափել 'ի Լեւոնէ զգրաւեալ սահմանս երկրին, եւ զսա ինքն՝ որպէս զնախորդն՝ ունել իւր հլու արգադիր: Եւ զի ոչ յայսմ նուագի եւեթ՝ այլ եւ յետոյ մանաւանդ բազում եւ մեծամեծ վեճք եւ գործք եղեն երկոցուն դրակից պետութեանցն, Հայոց եւ Անտիոքեայց, արժան է գիտել եւ զհանգամանս օտարին այն մերձաւորի, որ եւ գլխաւոր էր ամենայն իշխանութեանց արեւմտեայցն յարեւելս, յետ թագաւորութեան Երուսաղեմի, մանաւանդ մինչ չեւ էր կանգնեալ թագաւորութեան Կիպրոսի:



210. Հին պարիսպը Սնտիոք քաղաքի.